<<ԵԳՊԱ>> ՊՈԱԿ-ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ *<<ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍԱՆՀԻԳԻԵՆԻԿ ԵՎ ԼՎԱՑՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ>>* ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N <<ԵԳՊԱ-ՇՀԱՊՁԲ-15/11/-17/02>> -1

ք. Երևան <<27>> <<փետրվարի>> 2017թ.

<<Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա>> ՊՈԱԿ-ն, ի դեմս ռեկտոր Արամ Իսաբեկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և <<Էքսպրես Շին>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Զ. Եղիազարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված <<Տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցներ>> /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 1301890 (մեկ միլիոն երեք հարյուր մեկ հազար ութ հարյուր իննսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված

հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 օրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել

Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11 Պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա» ՊՈԱԿ	<<Էքսպրես Շին>> ՍՊԸ
ք. Երևան, Իսահակյան 36	Արմավիրի մ գ Բամբակաշատ 14/1 տ3
«Անելիք բանկ» Տիգրան Մեծ մ/ճ	Հայբիզնեսբանկ ՓԲԸ
ՀՀ 11815000774800	Հ/Հ 11500431918819
ՀՎՀՀ 01505555	ՀՎՀՀ 04423377
Հ	
Ռեկտոր՝	Տնօրեն՝
_____ Ա. Իսաբեկյան	_____ Զ. Եղիազարյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
<<27>> <<փետրվարի>> 2017թ. կնքված
<<ԵԳՊԱ-ՇՀԱՊՁԲ-15/11/-17/02>>- 1 *ծածկագրով գնման պայմանագրի*

<<ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍԱՆՀԻԳԻԵՆԻԿ ԵՎ ԼՎԱՑՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ>> ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Չափաբաժինը	Ապրանքի անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Քանակը
1	ծորակներ	ծորակ պատից կարճ / նասավոյ ռուսական/	հատ	6
2	ջրի ծորակ, 2 փականով	ծորակ, երկկողմանի, Տարբեր չափերի, խառնիչային տիպի լվացարանի վրայի, ըստ ԳՕՍՏ 25809-96, այտասահմանյան	հատ	6
3	խողովակաշարերի փականներ	փական ջրի1 տեղ 1/2"	հատ	10
4	դռան փականներ	ներդիրով դռան փական բարձր որակի	հատ	6
5	դռան փականի միջուկ	դռան փականի միջուկ 8սմ, 5 բանալի, բարձր որակի	հատ	20
7	դռան փականներ	դռան փական կախովի	հատ	4
8	շինարարության մեջ օգտագործվող ապրանքներ	միացման խողովակ 1/2	հատ	30
9	շինարարության մեջ օգտագործվող ապրանքներ	ճկուն խողովակ 50 սմ 1/2"	հատ	10
12	լամպերի կոթառներ	Պատի վրայի, 220-240վտ, պատին ամրացվող, 6A	հատ	10
13	վարդակ	Վարդակ պատի միջի, 220-240վտ, 6A, սպիտակ, բարձր որակի Makel կամ համարժեքը	հատ	60
14	մեկուսիչ ժապավեններ	ԻԶՈԼԵՆՏ, հոսանքի մեկուսացման համար, 20մմ լայնությամբ գլանափաթեթներով պոլիմերային ժապավեն, կապույտ գույնի	հատ	10
15	եռաբաշխիչ, վարդակին միացվող առանց լարի	գլխիկ, վարդակին միացվող առանց լարի, եռաբաշխիչ	հատ	5
16	փոխանջատիչներ	անջատիչ ՄԱԿԵԼ, կամ համարժեքը	հատ	20
18	խրոցակ	խրոցակ	հատ	10
21	երկարացման լարեր	3 տեղանոց, 3մմ: 110Ա, 250 Վ միացման մանրակներով, ԳՕՍՏ Ռ 51324.1-99 կամ համարժեքը: Անվտանգությունը՝ ըստ ԳՕՍՏ 12.2.007.0-75 և ՀՀ կառավարության 2005 թ. փետրվարի 3-ի N150-Ն որոշմամբ հաստատված <<Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի>> և ԳՕՍՏ 12.2.007.0.-75	հատ	10

22	պլաստմասայից դույլ	պլաստմասսայե, 13լ տարողության, ՀUS 124-2007, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը ըստ ՀՀ կառավարության 2005թ-ի մայիսի 25-ի N 679-Ն որոշմամբ հաստատված <<Սննդամթերքների հետ շփվող պոլիմերային և դրանց հիմքով պլաստմասսայե արտադրանքների տեխնիկական կանոնակարգի>>	հատ	15
23	ռուլոնով, զուգարանի թուղթ	երկշերտ , 9.8սմ x12.5 սմ, 150 թերթիկ, երկ. 18.75մ, պատրաստված գրելու թղթից, լրագրաթղթից և այլ թղթերի թափոններից, թույլատրված սանիտարահիգենիկ նշանակության ապրանքներ պատրաստելու համար: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված <<Կենցաղային և սանիտարահիգենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի>>, սնցքով	հատ	600
24	ավել	սենյակի հատակը մաքրելու համար, բնական, տեղական արտադրության, քաշը չոր վիճակում /350-500/ գրամ, երկարությունը /85-90/ սմ, ավլող մասի լայնքը /35-40/ սմ	հատ	50
25	գոգաթիակ	պլաստմասսայից՝ տարբեր գույների, ՀUS 124-2007 կամ համարժեքը	հատ	30
26	ավել գոգաթիակի հետ, պլաստմասայից		հատ	5
28	հատակ մաքրելու խոզանակ	հատակ մաքրելու խոզանակ, 30սմ	հատ	4
30	թղթե անձեռոցիկներ	Սեղանի եռաշերտ անձեռոցիկ	տուփ	60
31	տնտեսող լամպեր	լամպ Philips կամ համարժեքը, 20Վտ LED	հատ	300
32	էլեկտրական լամպ	Էլեկտրական լամպ /220-230/ Վ լարման, 50Հց հաճախականության, 75Վտ հզորությամբ, թափանցիկ, տանձաձև կամ սնկաձև, կոթառը E 27/27 տիպի, ԳOUS 2239-79 կամ համարժեք: Անվտանգությունը՝ ըստ ԳOUS 28712-90 և ՀՀ կառավարության 2005թ. Փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված, <<Ցածր լարման Էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի>>	հատ	100
33	էլեկտրական լամպ	Էլեկտրական լամպ /220-230/ Վ լարման, 50Հց հաճախականության, 100Վտ հզորությամբ, թափանցիկ, տանձաձև կամ սնկաձև, կոթառը E 27/27 տիպի, ԳOUS 2239-79 կամ համարժեք: Անվտանգությունը՝ ըստ ԳOUS 28712-90 և ՀՀ կառավարության 2005թ. Փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված, <<Ցածր լարման Էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի>>	հատ	100
34	Էլեկտրական լամպ	կախովի առաստաղի, փոքր ցոգոլ 60 վատ	հատ	50
38	աշխատանքային ձեռնոցներ	Տնտեսական ձեռնոցներ ռետինե, ամուր	զույգ	120
39	աշխատանքային ձեռնոցներ /բանվորական/	Բանվորական ձեռնոցներ	զույգ	20
40	հատակի մաքրման նյութեր	հեղուկ միջոց սալահատակի մաքրման համար	հատ	20

41	հատակի մաքրման նյութեր	հեղուկ միջոց մանրահատակի մաքրման համար, 1լ Էմսալ կամ համարժեքը	հատ	20
42	կահույքի փայլեցման միջոց	փայլեցնող միջոց փայտյա կահույքի համար, Աերոզոլային փաթեթվածքով :	հատ	30
43	լվացող նյութեր	աղտահանիչ մաքրող փոշի ՌԱԽՇԱ կամ համարժեքը	հատ	50
44	լվացքի փոշի ձեռքով լվանալու համար	300 գր, սպիտակ կամ բաց դեղնավուն կամ գունավորած հատիկավոր փոշի, փոշու զանգվածային մասը ոչ ավել 5 %,pH-ը՝ 7,5-11,5, ֆոսֆորաթթվական աղերի զանգվածային մասը ոչ ավելի 22 %, փրփրագոյացման ունակությունը (ցածր փրփրագոյացնող միջոցների համար) ոչ ավել 200 մմ, փրփուրի կայունությունը ոչ ավելի 0,3 միավոր, լվացող ունակությունը ոչ պակաս 85 %, սպիտակեցնող ունակությունը (քիմիական սպիտակեցնող նյութեր պարունակող միջոցների համար) ոչ պակաս 80 %, ԳՕՍՏ 25644 96: Անվտանգությունը, մակնշումը Ա փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված "Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող Լ մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի" համաձայն	տուփ	60
45	մաքրող նյութեր	ապակիի մաքրման հեղուկ	հատ	40
46	օճառ	ձեռքի օճառ, 100 գր	հատ	120
47	ձեռքի հեղուկ օճառ	ձեռքի հեղուկ օճառ	լիտր	50
48	փոշու հավաքման կտորներ	կտոր ընդհանուր տնտեսական օգտագործման 30* 30 սմ	հատ	50
51	սպիրալ ամանի	ման լվանալու սպիրալ մետաղական	հատ	30
52	սպունգ	սպունգ ման լվանալու համար	հատ	50
54	լվացարանի սիֆոն գոֆրեյով	լվացարանի սիֆոն գոֆրեյով	հատ	10
56	էլեկտրոդներ	էլեկտրոդներ 3մմ	հատ	3
58	կացիններ	կացիններ	հատ	2
63	բահ խորը	բահ խորը	հատ	4
64	բահ սուր	բահ սուր	հատ	4
70	անջատիչ	Մակել կիսամ համարժեքը	հատ	40

* Պարտադիր պայման է հանդիսանում ապրանքի չօգտագործված լինելը

ԳՆՈՐԴ

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
<<27>> <<փետրվարի>> 2017թ. կնքված
<<ԵԳՊԱ-ՇՀԱՊՁԲ-15/11/-17/02>> -1 *ծածկագրով գնման պայմանագրի*

<<ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍԱՆՀԻԳԻԵՆԻԿ ԵՎ ԼՎԱՑՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ>> ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

<< դրամ

Հ/Հ	Ապրանքի			Նախատեսվում է գնել 2017թ.								Ընդամենը	
	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	2	հատ	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	ծորակներ	հատ	2333.33	6	14000							6	14000
2	ջրի ծորակ, 2 փականով	հատ	2783.33	6	16700							6	16700
3	խողովակաշարերի փականներ	հատ	789	10	7890							10	7890
4	դռան փականներ	հատ	3450	6	20700							6	20700
5	դռան փականի միջուկ	հատ	2345	20	46900							20	46900
7	դռան փականներ	հատ	875	4	3500							4	3500
8	շինարարության մեջ օգտագործվող ապրանքներ	հատ	786.67	30	23600							30	23600
9	շինարարության մեջ օգտագործվող ապրանքներ	հատ	567	10	5670							10	5670
12	լամպերի կոթառներ	հատ	197	10	1970							10	1970
13	վարդակ	հատ	566.67	60	34000							60	34000
14	մեկուսիչ ժապավեններ	հատ	145	10	1450							10	1450
15	եռաբաշխիչ, վարդակին միացվող առանց լարի	հատ	456	5	2280							5	2280
16	փոխանջատիչներ	հատ	565	20	11300							20	11300
18	խրոցակ	հատ	100	10	1000							10	1000
21	երկարացման լարեր	հատ	1456	10	14560							10	14560
22	պլաստմասայից դույլ	հատ	586.67	15	8800							15	8800
23	ռուլոնով, զուգարանի թուղթ	հատ	123	600	73800							600	73800

24	ավել	հատ	832	50	41600							50	41600
25	գոգաթիակ	հատ	130	30	3900							30	3900
26	ավել գոգաթիակի հետ, պլաստմասայից	հատ	1420	5	7100							5	7100
28	հատակ մաքրելու խոզանակ	տուփ	975	4	3900							4	3900
30	թղթե անձեռոցիկներ	հատ	196.67	60	11800							60	11800
31	տնտեսող լամպեր	հատ	2100	300	630000							300	630000
32	էլեկտրական լամպ	հատ	100	100	10000							100	10000
33	էլեկտրական լամպ	հատ	150	100	15000							100	15000
34	էլեկտրական լամպ	զույգ	344	50	17200							50	17200
38	աշխատանքային ձեռնոցներ	զույգ	192.5	120	23100							120	23100
39	աշխատանքային ձեռնոցներ /բանվորական/	հատ	225	20	4500							20	4500
40	հատակի մաքրման նյութեր	հատ	370	20	7400							20	7400
41	հատակի մաքրման նյութեր	հատ	2500	20	50000							20	50000
42	կահույքի փայլեցման միջոց	հատ	453.33	30	13600							30	13600
43	լվացող նյութեր	տուփ	320	50	16000							50	16000
44	լվացքի փոշի ձեռքով լվանալու համար	հատ	443.33	60	26600							60	26600
45	մաքրող նյութեր	հատ	280	40	11200							40	11200
46	օճառ	լիտր	210	120	25200							120	25200
47	ձեռքի հեղուկ օճառ	հատ	344	50	17200							50	17200
48	փոշու հավաքման կտորներ	հատ	120	50	6000							50	6000
51	սպիրալ ամանի	հատ	100	30	3000							30	3000
52	սպունգ	հատ	234	50	11700							50	11700
54	լվացարանի սիֆոն գոֆրեյով	հատ	1000	10	10000							10	10000
56	էլեկտրոդներ	հատ	2800	3	8400							3	8400
58	կացիններ	հատ	4785	2	9570							2	9570
63	բահ խորը	հատ	1450	4	5800							4	5800
64	բահ սուր	հատ	1450	4	5800							4	5800
70	անջատիչ	հատ	455	40	18200							40	18200
Ընդամենը				X		X		X		X		X	1301890

ԳՆՈՐԴ

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/

Կ.Տ

ավելված N 3
<<27>> <<փետրվարի>> 2017թ. կնքված
N <<ԵԳՊԱ-ՇՀԱՊՁԲ-15/11/-17/02>> -1 *ծածկագրով գնման պայմանագրի*

<<ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍԱՆՀԻԳԻԵՆԻԿ ԵՎ ԼՎԱՑՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ>> ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

<< դրամ

N	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	<<Տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցներ>>				1301890									1301890

ԳՆՈՐԴ

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
«Էքսպրես Շին » ՍՊԸ	«Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա» ՊՈԱԿ
Արմավիրի մարզ, գ. Բամբակաշատ	Հասցե՝ ք. Երևան, Իսահակյան 36
Հ/Հ 11500431918819	Հ/Հ 11815000774800
Հայբիզնեսբանկ ՓԲԸ	Անելիք բանկ» Տիգրան Մեծ մ/ճ
ՀՎՀՀ 04423377	ՀՎՀՀ 01505555

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՍԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

24.03 2017թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը ապրանքների գնման պայմանագիր

Պայմանագրի կնքման ամսաթիվը 27.02. 2017 թ.

Պայմանագրի համարը՝ **<<ԵԳՊԱ-ՇՀԱՊՁԲ-15/11/-17/02>>- 1**

Պատվիրատուն՝ ի դեմս ռեկտոր Արամ Իսաբեկյանի

Պայմանագրի կողմը՝ ի դեմս <<Էքսպրես Շին >>ՍՊԸ տնօրեն Զ. Եղիազարյան ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ 24.03.2017 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը / դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1	ռուլոնով զուգարանի թուղթ	ռուլոնով զուգարանի թուղթ	600	600	Ըստ պայմանագրի	24.03.2017թ	73800	Ըստ պայմանագ
2	թղթե անձեռոցիկներ	թղթե անձեռոցիկներ	60	60	Ըստ պայմանագրի	24.03.2017թ	11800	Ըստ պայմանագ
	Ընդամենը						85600	

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
ստորագրություն	ստորագրություն
Զ. Եղիազարյան	
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 4.1
<<ԵԳՊԱ-ՇՀԱՊՁԲ-15/11/-17/02>>- 1 այմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է,ի դեմս ռեկտոր Արամ Իսաբեկյանի որ (այսուհետ՝ Պատվիրատու) և Էքսպրես Շին ՍՊԸ-ի (այսուհետ՝Կապալառու) միջև 27.02.2017 թ. .. ին կնքված **<<ԵԳՊԱ-ՇՀԱՊՁԲ-15/11/-17/02>>-1** գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 2017թ03.24ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**
ռուլոնով զուգարանի թուղթ	600	ՀԱՏ
թղթե անձեռոցիկներ	60	ՀԱՏ

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

Զ. Եղիազարյան
ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

Պայմանագրի կողմ

«Էքսպրես Շին » ՍՊԸ

Արմավիրի մարզ, գ. Բամբակաշատ

Հ/Հ 11500431918819

Հայբիզնեսբանկ ՓԲԸ

ՀՎՀՀ 04423377

Պատվիրատու

«Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա» ՊՈԱԿ

Հասցե՝ ք. Երևան, Իսահակյան 36

Հ/Հ 11815000774800

Անելիք բանկ» Տիգրան Մեծ մ/ճ

ՀՎՀՀ 01505555

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

21.03 2017թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը ապրանքների գնման պայմանագիր

Պայմանագրի կնքման ամսաթիվը 27.02, 2017 թ.

Պայմանագրի համարը՝ **<<ԵԳՊԱ-ՇՀԱՊՁԲ-15/11/-17/02>>- 1**

Պատվիրատուն՝ ի դեմս ռեկտոր Արամ Իսաբեկյանի

Պայմանագրի կողմը՝ ի դեմս <<Էքսպրես Շին >>ՍՊԸ տնօրեն Զ. Եղիազարյան ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ 21.03.2017 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը / դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1	ծորակներ	ծորակներ	6	6	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	14000	Ըստ պայմանագ
2	ջրի ծորակ, 2 փականով	ջրի ծորակ, 2 փականով	6	6	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	16700	Ըստ պայմանագ
3	խողովակաշարերի փականներ	խողովակաշարերի փականներ	10	10	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	7890	Ըստ պայմանագ
4	դռան փականներ	դռան փականներ	6	6	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	20700	Ըստ պայմանագ
5	դռան փականի միջուկ	դռան փականի միջուկ	20	20	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	46900	Ըստ պայմանագ
6	դռան փականներ	դռան փականներ	4	4	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	3500	Ըստ պայմանագ
7	շինարարության մեջ օգտագործվող ապրանքներ	շինարարության մեջ օգտագործվող ապրանքներ	30	30	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	23600	Ըստ պայմանագ
8	շինարարության մեջ օգտագործվող ապրանքներ	շինարարության մեջ օգտագործվող ապրանքներ	10	10	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	5670	Ըստ պայմանագ
9	լամպերի կոթառներ	լամպերի կոթառներ	10	10	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	1970	Ըստ պայմանագ
10	վարդակ	վարդակ	60	60	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	34000	Ըստ պայմանագ
11	մեկուսիչ ժապավեններ	մեկուսիչ ժապավեններ	10	10	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	1450	Ըստ պայմանագ

12	եռաբաշխիչ, վարդակին միացվող առանց լարի	եռաբաշխիչ, վարդակին միացվող առանց լարի	5	5	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	2280	Ըստ պայմանագ
13	փոխանջատիչներ	փոխանջատիչներ	20	20	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	11300	Ըստ պայմանագ
14	խրոցակ	խրոցակ	10	10	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	1000	Ըստ պայմանագ
15	երկարացման լարեր	երկարացման լարեր	10	10	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	14560	Ըստ պայմանագ
16	պլաստմասայից դույլ	պլաստմասայից դույլ	15	15	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	8800	Ըստ պայմանագ
17	ավել	ավել	50	50	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	41600	Ըստ պայմանագ
18	գոգաթիակ	գոգաթիակ	30	30	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	3900	Ըստ պայմանագ
19	ավել գոգաթիակի հետ, պլաստմասայից	ավել գոգաթիակի հետ, պլաստմասայից	5	5	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	7100	Ըստ պայմանագ
20	հատակ մաքրելու խոզանակ	հատակ մաքրելու խոզանակ	4	4	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	3900	Ըստ պայմանագ
21	տնտեսող լամպեր	տնտեսող լամպեր	300	300	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	630000	Ըստ պայմանագ
22	էլեկտրական լամպ	էլեկտրական լամպ	100	100	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	10000	Ըստ պայմանագ
23	էլեկտրական լամպ	էլեկտրական լամպ	100	100	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	15000	Ըստ պայմանագ
24	էլեկտրական լամպ	էլեկտրական լամպ	50	50	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	17200	Ըստ պայմանագ
25	աշխատանքային ձեռնոցներ	աշխատանքային ձեռնոցներ	120	120	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	23100	Ըստ պայմանագ
26	աշխատանքային ձեռնոցներ /բանվորական/	աշխատանքային ձեռնոցներ /բանվորական/	20	20	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	4500	Ըստ պայմանագ
27	հատակի մաքրման նյութեր	հատակի մաքրման նյութեր	20	20	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	7400	Ըստ պայմանագ
28	հատակի մաքրման նյութեր	հատակի մաքրման նյութեր	20	20	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	50000	Ըստ պայմանագ
29	կահույքի փայլեցման միջոց	կահույքի փայլեցման միջոց	30	30	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	13600	Ըստ պայմանագ
30	լվացող նյութեր	լվացող նյութեր	50	50	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	16000	Ըստ պայմանագ
31	լվացքի փոշի ձեռքով լվանալու համար	լվացքի փոշի ձեռքով լվանալու համար	60	60	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	26600	Ըստ պայմանագ
32	մաքրող նյութեր	մաքրող նյութեր	40	40	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	11200	Ըստ պայմանագ
33	օճառ	օճառ	120	120	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	25200	Ըստ պայմանագ
34	ձեռքի հեղուկ օճառ	ձեռքի հեղուկ օճառ	50	50	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	17200	Ըստ պայմանագ
35	փոշու հավաքման կտորներ	փոշու հավաքման կտորներ	50	50	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	6000	Ըստ պայմանագ
36	սպիրալ ամանի	սպիրալ ամանի	30	30	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	3000	Ըստ պայմանագ
37	սպունգ	սպունգ	50	50	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	11700	Ըստ պայմանագ
38	լվացարանի սիֆոն զոֆրեյով	լվացարանի սիֆոն զոֆրեյով	10	10	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	10000	Ըստ պայմանագ

39	էլեկտրոդներ	էլեկտրոդներ	3	3	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	8400	Ըստ պայմանագ
40	կացիններ	կացիններ	2	2	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	9570	Ըստ պայմանագ
41	բահ խոր	բահ խոր	4	4	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	5800	Ըստ պայմանագ
42	բահ սուր	բահ սուր	4	4	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	5800	Ըստ պայմանագ
43	անջատիչ	անջատիչ	40	40	Ըստ պայմանագրի	21.03.2017թ	18200	Ըստ պայմանագ
	Ընդամենը						1216290	

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

ստորագրություն

Հ. Եղիազարյան

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված N 4.1
<<ԵԳՊԱ-ՇՀԱՊՁԲ-15/11/-17/02>>- 1 այմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է,որ դեմս ռեկտոր Արամ Իսաբեկյանի որ (այսուհետ՝ Պատվիրատու) և Էքսպրես Շին ՍՊԸ-ի (այսուհետ՝Կապալառու) միջև 27.02.2017 թ. .. ին կնքված <<ԵԳՊԱ-ՇՀԱՊՁԲ-15/11/-17/02>>- 1 գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 2017թ03.21ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**
ծորակներ	6	հատ
ջրի ծորակ, 2 փականով	6	հատ
խողովակաշարերի փականներ	10	հատ
դռան փականներ	6	հատ
դռան փականի միջուկ	20	հատ
դռան փականներ	4	հատ
շինարարության մեջ օգտագործվող ապրանքներ	30	հատ
շինարարության մեջ օգտագործվող ապրանքներ	10	հատ
լամպերի կոթառներ	10	հատ
վարդակ	60	հատ
մեկուսիչ ժապավեններ	10	հատ
եռաբաշխիչ, վարդակին միացվող առանց լարի	5	հատ
փոխանջատիչներ	20	հատ
խրոցակ	10	հատ
երկարացման լարեր	10	հատ
պլաստմասայից դույլ	15	հատ
ավել	50	հատ
գոգաթիակ	30	հատ
ավել գոգաթիակի հետ, պլաստմասայից	5	հատ
հատակ մաքրելու խոզանակ	4	տուփ
տնտեսող լամպեր	300	հատ
էլեկտրական լամպ	100	հատ
էլեկտրական լամպ	100	հատ
էլեկտրական լամպ	50	զույգ
աշխատանքային ձեռնոցներ	120	զույգ
աշխատանքային ձեռնոցներ /բանվորական/	20	հատ
հատակի մաքրման նյութեր	20	հատ
հատակի մաքրման նյութեր	20	հատ
կահույքի փայլեցման միջոց	30	հատ
լվացող նյութեր	50	տուփ
լվացքի փոշի ձեռքով լվանալու համար	60	հատ
մաքրող նյութեր	40	հատ

օճառ	120	լիտր
ձեռքի հեղուկ օճառ	50	հատ
փոշու հավաքման կտորներ	50	հատ
սպիրալ ամանի	30	հատ
սպունգ	50	հատ
լվացարանի սիֆոն գոֆրեյով	10	հատ
էլեկտրոդներ	3	հատ
կացիններ	2	հատ
բահ խորը	4	հատ
բահ սուր	4	հատ
անջատիչ	40	հատ

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____Հ. Եղիազարյան _____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն